Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Ծ.Իսակովի հ.24/8 և 24/5 հասցեներում նախատեսվող հասարակական նշանակության օբյեկտ (առևտրի կենտրոն)

<<Էկո Մենեջմենթ>> ՍՊԸ
Տնօրեն՝ Ա.Մինասյան

/Քաղաքացի
Գուրգեն Սիմոնյան

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն 3
1.2 Հապավումներ 3
1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը 4
1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) 5
1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր 5
1.4.2 Ինժեներա-երկրաբանական պայմաններ .... **Error! Bookmark not defined.**
1.4.3 Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց 9
1.4.4 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում 12
1.1.1 Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ.. **Error! Bookmark not defined.**
1.1.2 Ջրամատակարարում և կենցաղային կոյուղի .... **Error! Bookmark not defined.**
1.1.3 Կաղրային ապահովում և շինտեխնիկա 18
1.1.4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 20
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 22
2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները 22
2.2 Կլիման 23
2.3 Օդային ավազան 31
2.4 Ջրային ռեսուրսներ 36
2.5 Հողերի նկարագիրը 37
2.6 Հողային ռեսուրսներ 37
2.7 Թափոնների կառավարում 40
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 41
3.1 Ռիսկերի գնահատում 41
3.2 Արտանետումների աղբյուրները 42
3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն 42
3.3.1 Մթնոլորտային օդ 42
3.3.2 Ջրային ռեսուրսներ 42
3.3.3 Հողային ռեսուրսներ 43
3.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը 43
3.3.5 Աղմուկ 45
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 47
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ 48
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 26

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	**Գուրգեն Սիմոնյան, Նաիրա Սիմոնյան**
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Ծովակալ Իսակովի փողոցի հ24/8 և 24/5
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Ծովակալ Իսակովի փողոցի հ24/8 և 24/5
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հասարակական նշանակության օբյեկտի (առևտրի կենտրոն) նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Ծովակալ Իսակովի փողոցի հ24/8 և 24/5 հասցեներում:

Առևտրի կենտրոնի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից առևտրի կենտրոն:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման

շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վ/շ Իսակովի պողոտա 24/8 և 24/5 հողամասերի վրա հասարակական նշանակության օբյեկտի(առևտրի կենտրոնի) կառուցման նախագծի համար հիմք են հանդիսացել՝ N01/18-07/1-21-231-257 ճարտարապետահատակագծային և պատվիրատուի առաջադրանքները, N26122019-01-0162, N26122019-01-0057 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները: Առևտրի կենտրոնի բաղկացուցիչ մասն են հանդիսանալու կահույքի վաճառասրահները: Հողամասերի ընդհանուր մակերեսը կազմում է 1,01765 հա, հողամասին կից հարևան հողամասում կառուցվում է եռահարկ առևտրի կենտրոն, մնացած կից հողամասերը կառուցապատված չեն: Դեպի հողամաս սպասարկումները նախատեսվում է Իսակովի պողոտայից և հողամասի հետին հատվածում առկա Իսակովի պողոտայից սկիզբ առնող ճանապարհից:

Նախատեսվող առևտրի կենտրոնը պողոտային հարող հատվածում լինելու է եռահարկ՝ հավասար կից շենքին, իսկ ետ ընկած հատվածում լինելու է չորս և հինգ հարկանի, ստորգետնյա հարկերը մասնակի ծառայելու է որպես ավտոկայանատեղիներ և հասարակական տարածքներ:

Տանիքները լինելու են հարթ, պողոտային հարող տանիքը լինելու է շահագործվող:

Նախագծվող համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշներ՝

-Ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է՝ 10176.5 քմ,

- Վերգետնյա կառուցապատման տոկոսը ՝ 90%, մակերեսը՝ 7316 քմ,

-Կանաչապատման տոկոսը կազմում է՝ 10%, մակերեսը ՝ 1017.65:

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,

- գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման համար:

- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

1.4.2 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝

Ըստ ուսումնասիրությունների ուսումնասիրվող տեղամասը բաղկացած է հետևյալ գրունտներից վերևից-ներքև :

№1 Լիցքային գրունտ:Այս գրունտը ունի մասնակի տարածվածություն:

շերտ Հզորությունը՝ 0.3-0.8մ է:

№2 Կավավազ խճով: Հզորությունը 3.5 մինչև 4.5մ է: Տարածված է ամենուրեք :

շերտ Այս գրունտները ունեն հետևյալ ֆիզիկա-մեխանիկական և դեֆորմատիվ ամրության բնութագրիչները՝

Բնական գրունտի խտությունը՝ 1.85 տ/մ^3

Դեֆորմացիայի մոդուլը՝ 200 կգ/սմ^2

Պայմանական հաշվարկային դիմադրությունը՝ R_0 = 2.0 կգ/սմ^2 :

Ներքին շփման անկյունը 20 ^{0}

Պաստելի գործակիցը՝ 3 կգ/սմ^3

№3 Խոշորաբեկորային բազալտներ տեղ-տեղ խարամացված : Այս գրունտները ընկած են

շերտ №2 շերտի տակ : Հզորությունը 25մ ավելին է :

Այս գրունտները ունեն հետևյալ ֆիզիկա-մեխանիկական և դեֆորմատիվ ամրության

բնութագրիչները՝

Խտությունը - δ=2.41 տ/մ^3

Տեսակարար կշիռը - γ=2.75 տ/մ^3

Ծակոտկենությունը՝ I=12%

Պայմանական հաշվարկային դիմադրությունը՝ R_n = 5 կգ/սմ^2 :

Պաստելի գործակիցը՝ 20 կգ/սմ^3

ԳԱՀՈՒՄ ՀԱՏԱԿԱԳԾԻ, Մ 1 : 500

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԻ

1.4.3 Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 50,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԵԿ ՄԻԱՎՈՐ ՄԱՍԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																				
		3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ
1.	ԿԱՊԱԼԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ																					
2.	ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ																					
3.	ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																					
4.	ՀԻՄՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՀԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ																					
5.	ՇԵՆՔԻ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԿՐՈՂ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ																					
6.	ՏԱՆԻՔԻ ԱՆՋՐԱՆՑԻԿ ՇԵՐՏԵՐԻ ՊԱՏ.																					
7.	ՊԱՐՓԱԿՈՂ ՊԱՏԵՐԻ ՇԱՐՈՒՄ																					
8.	ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																					
9.	ՇԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ																					
10.	ԱՐՏԱՔԻՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																					
11.	ՆԵՐՔԻՆ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																					
12.	ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԴՌՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ																					
13.	ՎԵՐԵԼԱԿՆԵՐ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԻԿԱ																					
14.	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																					
15.	ՏԱՐԱԾՔԻ ՄԱՔՐՈՒՄ / ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ																					
16.	ԻՆԺ. ԳԾԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏ. ՓՈՐՁԱՐԿՈՒՄ																					
	ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԸՆԹԱՑ																					
	ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԸՆԹԱՑ																					
	ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍԹԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ																					

ԸՆՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ -- 50 ԱՄԻՍ

FULL ART << ՖՈՒԼ-ԱՐՏ >> ՍՊԸ	ՆԱԽԱԳԾԻ Գ.Տ.	Ն. ՊԱԿՈՌՅԱՆ		ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա պ/շ Իսակովի պողոտա 24/8 և 24/5
				ՑԱՐՏԱՐՄԵՏԱԿԱՆ ՄԱՍ / ՄԱՍ / ՓԵՐԹ / ՓԵՐԹԵՐ
				ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ / ԳԱ -3 / 10
	ՏԵՍՈՒԵԼ	Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ		

1.4.4 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Որպես հիմնական մոնտաժային միջոց ընտրվել է TEREX CTT 91-TS12 աշտարակային կռունկը և **Галичанин КС-65713-1** վերամբարձ ավտոկռունկը որոնք կարող են ըստ կարիքի, կամ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում տվյալ տեխնիկան ապահովելու և տեխնիկոտնտեսական նկատառումներից ելնելով փոխարինվել: Հնարավոր է օգտագործել նրանցից մեկը կամ կառուցմանը զուգահեռ փոխարինել մեկը մյուսով: Առանձին փոքրաձավալ վերհանների օգտագործումը նորմայավորված չէ: Որպես այլընտրանքային տարբերակներ կարող են առաջարկվել համապատասխան տեխնիկական տվյալներով այլ կռունկներ: Կռունկները ընտրվում և տեղադրվում են

այնպես, որ սլաքի ազատ պտտական շարժման ժամանակ յուրաքանչյուր կռունկի սլաքը չկարողանա հարվածել այլ կռունկի կանգնակին:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձի, պահեստավորման մակերեսների, տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինությունների կիրառում ՀՀԱ միջոցների օժտմամբ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.6 Շինմոնտաժային աշխատանքների իրականացման եղանակները

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- տարածքի համահարթում,
- ժամանակավոր ցանկապատի տեղադրում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- երկրաբաշխական բաժանարար ցանցի տեղադրում,
- կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում / անհրաժեշտության դեպքում/,
- հողային և կառուցման աշխատանքներ մինչև զրոյական նիշ,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ **KOMATSU PC 400-7** կամ **Hyundai 170W** տիպի էքսկավատորով՝, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Մշակված գրունտը պահպանվում է փորվածքների ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը՝ տեղափոխվում:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով հիմնային շերտը առաջարկվում է ամրացնել BW 216 DH-4 գլդոնով խորանարդային գրտնակով կամ CR 3/60 տիպի տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում՝ ձեռքի տոփանիչներով:

Համահարթման և արտաքին ետլիցքի ժամանակ առաջարկվում է կիրառել **KOMATSU D37-EX-22** հարթաշերեփի 1.77 մ³ տարողությամբ բուլդոզեր:

Միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացման համար նպատակահարմար է գույքային կաղապարամածի կիրառումը:

Կոնստրուկցիաների ամրանավորումը առաջարկվում է իրականացնել ինչպես առանձին ձողերով, այնպես էլ ամրանային կմախքներով և ցանցերով: Բետոնացումից առաջ անհրաժեշտ է ստուգել ամրանի, միջադիրների և կաղապարամածի տեղադրման ճշտությունը, ամրանը պետք է մաքրված լինի կեղտից և ժանգից: Բետոնի խտացումը անհրաժեշտ է իրականացնել խորքային և մակերեսային թրթռիչներով:

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է СБ-69Б ավտոբետոնախառնիչներով՝ վերամբարձի միջոցով տեղադրման վայր հետագա տրմամբ:

Միաձույլ կոնստրուկցիաների իրականացումը նպատակահարմար է իրականացնել անջատ եղանակով: Առաջարկելի է տիպարային տեխնոլոգիական քարտերի կիրառումը:

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կաղապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1.5 ՄՊա ամրության ձեռքբերումից հետո:

Հիմքի, սյան կաղապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70% ամրություն ձեռք բերումից հետո, ծածկի համար՝ 80%:

1.4.7 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:


ՇԻՆ. ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ Մ 1:500
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵԼՔԻ ԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵԼՔԻ ԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ
Իսակովի պող.
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐՈՒՄ
ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1.1.1 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Համալիրի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 45 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ -5 մարդ

Արհեստագործներ և բանվորներ -28 մարդ

Վարորդներ և օգնականներ -12 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

- Աշտարակային կռունկ TEREX CTT 91-TS12, կամ համարժեք - 1 հատ
- Վերամբարձ ավտոկռունկ **КС-65713-1 ,Галичанинե,** կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով - 1 հատ
- էքսկովատոր Hyundai 170W /հիդրոմուրճով/, կամ համարժեք տեխնիկական տվյալներով - 2 հատ
- Բուլդոզեր KOMATSU D37-EX-22 - 1 հատ
- Թրթրագլդոն BW 216 DH-4 - 1 հատ
- Բեռնատար ինքնաթափ МАЗ 5550, կամ համարժեք տեխնիկական տվյալներով - 6 հատ
- Ավտոբետոնափոխադրիչ խառնիչով СБ-69Б, կամ համարժեք տեխնիկական տվյալներով - ըստ պահանջի
- Շարժական կոմպրեսոր **ЗИФ-ПВ-10/0,7** կամ համարժեք տեխնիկական տվյալներով - 1 հատ
- էլ.եռակցման սարք **СТН 500,** կամ համարժեք տեխնիկական տվյալներով - 2 հատ
- Գազային եռակցման սարքավորում - ըստ պահանջի
- Բարձրադիր հարթակներ - ըստ պահանջի
- Ձեռքի էլեկտրական գործիքներ - ըստ պահանջի
- Ձեռքի մեխանիկական գործիքներ - ըստ պահանջի
- Ատաղձագործական գործիքներ - ըստ պահանջի



Կցովի վերամբարձ կռունկ QTZ 125 HS6015

Հենարանի առանցքային չափերը՝ ,մ 4,5x4.5 https://www.etwinternational.ru/2-4-flat-top-tower-crane-45405.html

Շարժիչի հզորությունը,կՎտ , 46-82

Առավելագույն բեռնամբարձությունը ,տ 8

Սլաքի առավելագույն թռիչքը, մ 60,0

Ամբարձման բարձրությունը /խարսխված, ազատ կանգնած վիճակում/ , մ 45.0

Նույնը՝ շենքին ամրակապված վիճակում՝, մ 141,0:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

1.1.2 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է մոտ 11250 կգ և շինարարական աղբն է 40 խմ ծավալով, այդ թվում ավտոտնակի քանդումից առաջացող: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) **Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$W_{խ.տ.} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1– սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 40 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1500 օր

$W_{խ.տ.}$= (5 x 0.016 + 40 x 0.025) x 1050 = 1620 խմ/շին. ժամ.:

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$ Մ_1 = S_1 \times K_1 \times T$, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 900

$Մ_1$ = 500 x 0.0015 x 900 = 675 խմ/շին. ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2295 խմ/շին. ժամ:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Ծովակալա Իսակովի պողոտայով անցնող D=300մմ ջրագծից D=20մմ միացումով, կոյուղագիծը Ծովակալա Իսակովի պողոտայով անցնող D=1400մմ կոյուղագծին D=150մմ խողովակով(տեխնիկական պայմանը կցվում է):

Բնակելի համալիրի գազամատակարարումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ ցանցին, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ (տեխնիկական պայմանը կցվում է):

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով:

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի(տեխնիկական պայմանը կցվում է) :

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Նախագծվող օբյեկտը գտնվում է ք. Երևան, «Մալաթիա-Սեբաստիա» վարչական շրջան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Ծովակալ Իսակովի փողոցի h24/8 և 24/5 հասցեներում: Հողամասի առկա վիճակը՝ հողամասում առկա է ավտոտնակ-51.4քմ մակերեսով: Նախագծվող օբյեկտի մերձակայքում գտնվում են կառուցվող շենք և կառուցապատումից ազատ հողամասեր: Տարածքի մուտքը ապահովում է Ծովակալ Իսակովի փողոցից:

Համաձայն տեղամասի ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության տեղամասը բաղկացած է հետևյալ գրունտներից վերևից-ներքև :

№1 Լիցքային գրունտ:Այս գրունտը ունի մասնակի տարածվածություն:

շերտ Հզորությունը՝ 0.3-0.8մ է:

№2 Կավավազ խճով: Հզորությունը 3.5 մինչև 4.5մ է: Տարածված է ամենուրեք :

Գրունտային ջրերը ընկած են 10մ-ից ավել խորության վրա:

Համաձայն ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության տարածքում բուսահողը բացակայում է: Տարածքը իրենից ներկայացնում է բաց ազատ տարածք ծառթփային բուսականությունը բացակայում է:

Տարածքում բնության հատուկ պահպանվող և պատմամշակույթային հուշարձանների տարածքներ չկան:

Համաձայն ՀՀ տարածքի սեյսմիկ գոտեվորման սխեմատիկ քարտեզի ուսումնասիրվող շրջանը պատկանում է 3-րդ գոտուն:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

2.2 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան –30 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +42 °C: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.4	-0.9	5.3	12.4	17.4	21.6	25.5	25.2	20.5	13.5	6.5	-0.2	**12.0**

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	**60**

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ^2: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը ____միջին_____ , մմ մաքսիմալ օրական												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
24 21	26 23	32 34	43 29	52 42	27 31	13 29	10 26	13 51	26 35	28 36	22 28	**316** **51**

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ^2:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-"Էրեբունի" մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհաղվությունների հնարավորությունը,%	Միջին տարեկան արագությունը,մ/վ	Միջին տարեկան առավելագույնը,մ/վ	Ուժեղ քամիներով (՝՝15մ/վ՝՝ օդերի թանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ տարիների "n"		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևել-յան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Էրեբունի	912.1	Հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1,5	29	22	27	29
			2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7							
		Ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1,9					
			3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6							
		Հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8					
			5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3							
		Հոկտեմ-բեր	6	17	10	10	21	20	10	5	63	1,0					
			2,9	2,5	2,1	2,5	2,3	2,4	2.9	3.5							

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 2.5 – 2.7 աղյուսակներում:

Արեգակնային ճառագայթում (Երևան)

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ²												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	1068	1047	842	620	339	214	**700**

Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.6.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	**2696**

Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	**39**

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 2.8 – 2.9 աղյուսակներում:

Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, °C										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա ապահովվածություն		ամենա ցուրտ հինգօրյակի ապահովվածություն		միջին ամենացուրտ ժամանակահատվածում	միջին ամենացուրտ ամսվա միջին օրական բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական	Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝			միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	արագությունները առավելագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
0.98	0.92	0.98	0.92				0	8	10						
-21	-19	-19	-17	-3.6	-27	8.3	70 -2.4	140 1.0	159 1.8	78	68	132	60	Հվ	2.6

Կլիմայական պարամետրերը տարվա տաք ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.9.

Օդի ջերմաստիճանը, °C					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
ապահովվածություն		բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ամպլիտուդա						
0.95	0.99				միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին	օրական մաքսիմում	գերակշռող ուղղություն հունիս-օգոստոս ամիսներին	հուլիսին միջին արագություններից նվազագույնը, ըստ ռումբերի, մ/վրկ
32	34	42	33	15.6	45	28	154	51	Հվ	2.1

2.3 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

Աղյուսակ 2. Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Երևանում

Որոշվող նյութերը (դիտակայանների քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա (մգ/մ³)	ՍԹԿ միջին օրական (մգ/մ³)
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (7)	0.067 (դիտ. N18)	18	-	0.020	0.05
Ազոտի երկօքսիդ (7)	0.088 (դիտ. N18)	175	-	0.018	0.04
Փոշի (7)	2.387 (դիտ. N18)	694	34	0.126	0.15
Գետնամերձ օզոն (7)	0.257 (դիտ. N19)	53	1	0.010	0.03

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

2.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2014 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ$_5$-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հողային ռեսուրսներ

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 38410 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 37081 խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ 1329 խմ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

2.7 Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները: Տարածքում բուսածածկույթը և հողային ծածկույթը հանդիպում են տեղ-տեղ: Տարածքն արդեն իսկ ենթարկվել է շինարարական աշխատանքների ազդեցության, իրականացվում են կառուցապատման աշխատանքներ: Քարքարոտ, ավազային, հողածածկույթի վրա տեղ-տեղ , տեղ-տեղ ինքնաբերաբար աճած նոսր բուսականություն:

Ստորև բերված է Երևան քաղաքի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տեղեկատվությունը:

2.7.1 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանյան գոգավորությունը տեղաբաշխված ծովի մակերևույթից 860-1390մ բարձրությունների սահմաններում: Երևանյան գոգավորությունում առկա են հարթավայրային լանդշաֆտային և լավային սարավանդներ, որոնք բաղկացած են կիսաանապատային և նախալեռնային գոտիներից: Երևանի դիտարկվող տարածքում, որտեղ իրականացվելու է նախատեսվող գործունեությունը գերիշխում են լավային սարավանդները, իսկ հարավային լանդշաֆտները՝ Հրազդան և Գետառ գետերի սելավաբերուկ հողատարածքներն են: Երևան քաղաքը գտնվելով ջրազուրկ կիսաանապատային գոտում ընդերքում ունի հարուստ ջրատար շերտեր՝ խորքային ջրեր:

Երևան քաղաքի տերիտորիան Անդրկովկասի ամենաչորային շրջաններից մեկն է, կլիման այստեղ խիստ ցամաքային է, կիսաանապատային: Երևանում ցածր է նաև օդի հարաբերական խոնավությունը, որը ամռան ամիսներին իջնում է մինչև 40%-ի: Երևանում հաճախակի նկատվում է կարճ գարուն, որը բացասական ազդեցություն է ունենում ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա:

Երևանի հողերը տիպիկ գորշ կիսաանապատային են, աղքատ սննդանյութերով, հարուստ կարբոնատներով, սակավազոր, կավավազային, կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ, շերտաթեփուկավոր կամ փոշեհատիկային կազմությամբ, քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով: Հազարամյակների ընթացքում արհեստական ոռոգման տարբեր տեսակի ագրոմիջոցառումների պարագայում Երևանի տարածաշրջանում առաջացել են կուլտուր-ոռոգելի զգալի հողատարածքներ, որոնք վերածվել են տարբեր տիպի փարթամ կուլտուրական լանդշաֆտների:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն

չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Պետք է նշել, որ գործունեության ենթակա և հարակից տարածքներն արդեն իսկ խախտված են և օգտագործվում են մարդու կողմից:

2.7.2. Կենդանական աշխարհ

Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են: Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դոդոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատ սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, բնության հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների, կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

2.8 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբնէ 12250 կգ և շինարարական աղբն է 40խմ ծավալով, այդ թվում ավտոտնակի քանդումից առաջացող: Շինարարական աղբը ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը և շինարարության փուլում և շահագործման փուլում կտեղափոխվի մոտակա աղբավայր Երևան քաղաքը սպասարկող օպերատորի կողմից :

Շահագործման փուլում կենցաղային աղբի հավաքման և տարածքից հեռացման համար շենքերի նկուղային հարկերում նախատեսվում է տարածք, որի վերջնական տեղը կհստակեցվի օպերատորի հետ աղբահան մեքենաների տեսակը ճշտելուց հետո:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիակայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 *Մթնոլորտային օդ*

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով

տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

3.4 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 1018քմ: Տարածքում կտնկվի արծաթափայլ եղևնի-1հատ, կարմիր թխկի 4 հատ, գնդաձև իլենի 8 հատ, սակուռա 8 հատ: Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցից(պայմանագրային հիմունքներով), ռետինե խողովակների միջոցով՝ կաթիլային համակարգով 1018*75*3/1000=230 խմ/տարի: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.5 *Աղմուկ*

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

4. *Մշտադիտարկումների իրականացման պլան*

Համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվում է 1500000 հազ. դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարակամ աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն

Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը	Կապալառու

				կնքելու ընթացքում	
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար

Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապե-տարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, EMEP/EEA, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱԴԱՋԱԴՐԱՆՔ)

N 01/18-07/1-21-231-2017 «11» «03» 2020թ.

Օբյեկտ Հասարակական նշանակության օբյեկտի (առևտրի կենտրոնի) կառուցման (բարձր ռիսկայնության օբյեկտ, IV կատեգորիա)
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հակիրճ բնորոշումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))

Մեկ փուլով՝ «Աշխատանքային նախագիծ» կամ
երկու փուլով՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» նախագծային փաստաթղթերի մշակման համար
(նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Ծ.Իսակովի պող. հ.24/8 և 24/5
(վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Գուրգեն Սիմոնյան, Նաիրա Սիմոնյան
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.26122019-01-0162 և հ.26122019-01-0057 վկայականները, էսքիզային նախագիծը:
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման,
գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր համատեղ սեփականություն,
կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0525-0110, 01-007-0525-0114, 01-007-0525-0012:
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 1.01765 (0.80895+0.16655+0.04215) հա:
(հողամասի սահմանները՝ կորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը Հողամասում առկա է բնակելի փուն:
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները Ծովակալ Իսակովի փողոց:
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և՝ սարքավորումներ Կից գործող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր Ծովակալ Իսակովի փողոց, կառուցվող շենք և կառուցապատումից ազատ հողամասեր:
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ հաճածայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) -------
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ -------
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Մշակել հասարակական առևտրի կենտրոնի նախագիծ հ. 26122019-01-0162 և հ.26122019-01-0057 վկայականներով ամրագրված հողամասի սահմաններում:
(ելնելով ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից. առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքներ, արտաքին դռների, պատուհանների համաչափությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) -------

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) Հարակից հողամասերից, շենքերից և շինություններից կառույցի հեռավորությունը նախատեսել գործող նորմատիվային պահանջների համաձայն:

9.3.թույլատրելի բարձրությունը (մետր) Շենքը նախատեսել երկու սդորգետնյա և մինչև հինգ վերգետնյա հարկերով (Ծովակալ Իսակովի պողոտային հարող ճակատը մինչև երեք վերգետնյա իսկ դեպի հողամաղի հյուսիս արևելյան կողմը մինչև հինգ վերգետնյա), առավելագույն բարձրությունը զրոյական նիշից ընդունել մինչև 27.00 մ:
Հնարավոր է մասնակի ավելի բարձր ծավալների շեշտադրում գանիքը սպասարկող աստիճանավանդակների, վերելակների և ինժեներական հորանների համար:

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) -------

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) Շենքի փակ մինչև 75%
Շենքը սպասարկող ճանապարհների ու սալվածքների համար մինչև 15%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) 10% և ավելի

9.7. այլ պահանջներ
- Սույն թույլտվության 20-րդ կետով ամրագրված պահանջները ապահովելու նպատակով՝ շինարարական հրապարակի կազմակերպման նախագծում, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման պարագայում նշել դրանց մակերեսը:
- Նախագծով ապահովել հարակից փարածքների շահագործման այդ թվում արևահարման ռեժիմի ազդեցության և նորմատիվային պահանջները:
- Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:
- Կառույցներում կենտրոնացված օդափոխության համակարգ չնախատեսելու դեպքում, կառույցի արտաքին տեսքը և ճարտարապետական հորինվածքը հետագա խաթարումներից զերծ պահելու համար, նախատեսել քողարկված համակարգ՝ տեղային օդափոխիչների տեղադրման համար:
- Կառույցում նախատեսել հասարակական նշանակության տարածքների սպասարկման համար անհրաժեշտ առանձնացված ինժեներական հորաններ, բացառելով հետագայում արտաքին ճակատներով օդատարերի անցկացումը:
- Նախագծով լուծել ավտոտրանսպորտի անվտանգ ելումուտի և բացօթյա ավտոկայանման խնդիրները:
- Կառույցը՝ հարևան հողամասերի սահմանագծով տեղակապելու պարագայում, ստանալ վերջիններիս սեփականատերերի համաձայնությունը:
- Տանիքները նախատեսել կազմակերպված ջրահեռացմամբ:
- Տանիքները նախատեսել հարթ, կիրառելով հորիզոնական կանաչապատման սկզբունքը, հնարավոր է բացօթյա լողավազան:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը	Քանդման ենթակա 51.4 քմ բնակելի փոն:
11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	Նախատեսել ստորգետնյա ավտոկանգառ:
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Նախագծի ինժեներական մասը մշակել իրավասու կազմակերպությունների կողմից տրված տեխնիկական պայմաններին համաձայն:
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	Կցվում է (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատակոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	-------- (համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	--------
12.6. աղբահանություն	--------
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Կազմակերպել ջրահեռացում: (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Մշակել տարածքի բարեկարգման նախագիծ: (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)
15. Շինարարական նյութեր	Երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր: (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	-------- (արտակարգ իրավիճակներում մարդկանց, օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները: (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	Նախատեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմին համապատասխան:
19. Շրջակա միջավայրի պահպանում	• Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ: • Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և տեխնածին ծագման գործոններին սանիտարական կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները: (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ. 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները: III. Նոր կառուցվող շենքերի, շինությունների համար շինարարության թույլտվությունը տրվում է 2 տարի ժամկետով, եթե տվյալ օբյեկտի շինարարության համար քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի ՍՆՊ 1.04.03-85* (Շինարարությունների շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերը) գերատեսչական ակտով սահմանված նորմերով այլ ժամկետներ նախատեսված չեն: 112. Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման և բարելավման աշխատանքների համար թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերով տվյալ օբյեկտի շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) տևողության նորմերով հաշվարկված ժամկետով: (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	Երկու տարի, հնարավոր է մասնաշենքերի փուլային համաձայնեցում: (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)
	ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2-ի համաձայն պետական համալիր փորձաքննություն այդ թվում ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ: (ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)
23. Միջանկյալ համաձայնեցում	ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ: (իրավասու մարմնի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:
24. Հասարակական քննարկումներ	-------- (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)
25. Համաձայնեցումներ	• Երևանի քաղաքապետի հետ: • Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել փվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ: (նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)
26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում	--------
27. Այլ պայմաններ	Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու մասին» հ. 128-Ն հրամանով հաստատված դրույթներին:

Երևանի քաղաքապետ
Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ստորագրությունը
Կ. Տ.

Կատարող՝ Է.Օրդուխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 26 դեկտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԳՈՒՐԳԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏԻ, ՆԱԻՐԱ ՍԻՄՈՆՅԱՆ ՂԱՋԱՐԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Մալաթիա-Սեբաստիա Ծ. Իսակովի պողոտա 24/8

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի և հաջորդող գրավի, հիփոթեքի պայմանագիր 25.12.2019թ. h 19822

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0525-0110
Մակերեսի չափը (հա)՝ 0.80895
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 26122019-01-0162, գաղտնաբառ՝ BMAS9HHCAM93

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարինե Ավետիսյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 26122019-01-0162, գաղտնաբառ՝ BMAS9HHCAM93

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2

Կադաստրի կոմիտե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 26 դեկտեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԳՈՒՐԳԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ ՀԱՄԼԵՏԻ, ՆԱԻՐԱ ՍԻՄՈՆՅԱՆ ՂԱԶԱՐԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Մալաթիա-Սեբաստիա Ծ. Իսակովի պողոտա 24/5

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի և գրավի, հիփոթեքի պայմանագիր 25.12.2019թ. թիվ 19821

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0525-0114, 01-007-0525-0012
Մակերեսի չափը (հա)՝ 0.16655, 0.04215
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման, Բնակելի կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 26122019-01-0057, գաղտնաբառ՝ UTI2AIDCSJTD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ բնակելի

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-007-0525-0012-001	Բնակելի տուն	51.4 քմ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Էդվարդ Մանուկյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 26122019-01-0057, գաղտնաբառ՝ UTI2AIDCSJTD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է սկզբնվկ Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2

Կադաստրի կոմիտե

Հաստատում եմ՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրենի տեղակալ-
Գլխավոր ճարտարագետ

_____ Ա. Հակոբյան

«03» 02 2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա թիվ 24/5 և24/8 հասցեներում սեփականատեր Գ.Սիմոնյանի կողմից կառուցվող հասարակական շենքի
(օբյեկտի անվանումը և հասցեն)
գազամատակարարումը 870 մ^3/ժ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել տարածքում առկա ԳԲ ցանցի մ/ճ գազատարից
(գոյություն ունեցող գազատարի անվանումը)

որի պայմաններն են՝

➢ Միացվող գազատարում գազի ճնշումը	1.2-1.5 կգ/սմ^2
➢ Գազատարի տրամագիծը	530մմ
➢ Գազատարի որևէ հատվածի վերականգնման (վերատեղադրման) անհրաժեշտություն	-
➢ Միացման կետը	Ըստ տեխնիկական պայմանների:
➢ Տեղադրվող գազի հաշվիչ	Ըստ գազասպառման ծախսերի, բարձր ճշտության դասի կահավորված էլեկտրոնային ճշտիչով:
➢ Լրացուցիչ պայմաններ	1. Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում: 2. Նախատեսել այլընտրանքային վառելիքի մեկամյա պաշար:

Հիմք՝

- Երևանի ԳԳՄ 01.02.2020թ. No 22-13/340 գրությունը,
- Տեխնիկական պայմանները:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
ԳԲՑ և ՆԳՀ Շ ու Ս բաժնի պետ _____ Յու. Նազարյան

Կազմեց _____ Ա. Խաչատրյան

VEOLIA
Ջուր

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման
ծրագրերի բաժնի պետի ժ/պ
Ա.Սեդրյան

«29» հունվարի 2020թ.
N 1401/440

Առարկան՝ Տեխնիկական պայմանի ելակետային տվյալներ

Հարգելի պարոն Սեդրյան,

Ի պատասխան Ձեր 21.01.2020թ. թիվ 50/1-Ս-231 գրության՝ կապված Ծովակալ Իսակովի պողոտա 24/5 և 24/8 հասցեների համար տեխնիկական պայմանի տրամադրման հետ, հայտնում ենք, որ ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Ծովակալ Իսակովի պողոտայով անցնող d=300մմ ջրագծից d=20մմ միացումով, կոյուղագիծը՝ Ծովակալ Իսակովի պողոտայով անցնող d=1400մմ կոյուղագծին d=150մմ միացումով՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված վերջնական տեխնիկական պայմանի և ելակետային տվյալների հիման վրա մշակված ու համաձայնեցված նախագծի:

Հարգանքով՝ Գլխավոր տնօրեն
Մ.Շահինյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 440
«29» 01 2020թ.

Պատասխանատու՝
Արտադրատեխնիկական բաժնի պետ
Ա.Մարտիրոսյան

ՀՀ, ք. Երևան, 375025, Աբովյան 66ա
Հեռ. 1-85, 0-800-00-185, 011-300-185
էլ. փոստ՝ office@vjur.am
Վեբ-էջ՝ www.veolia.am

RA, Yerevan, 375025, St.Abovyan 66a
Tel.: 1-85, 0-800-00-185, 011-300-185
E-mail: office@vjur.am
Web site: www.veolia.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ, ք. Երևան, Ա. Արմենակյան փող. 127

N ՏՊ ՃՀԱ-0.4/0049

<<24>> 01 2020թ.

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՃՀԱ տրամադրելու համար

Համաձայն ԷՄՕԿ-ի 13.9 կետի պահանջների

Տրվում է՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար՝
Ա. Սեդոյանին (21.01.2020թ., 50/1-Ս-231)
Սպառիչի գործունեությունը և հասցեն՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Ծ. Իսակովի 24/5 և 24/8
Պահանջվող հզորությունը՝ 710 կՎԱ
Սնող ցանցի լարումը՝ 10 կՎ

1. Հասարակական շենքի էլ. մատակարարումը հնարավոր կլինի իրականացնել՝ դիմումատուի կողմից կառուցվող կամ տեղադրվող ենթակայանի 0.4 կՎ վահանից:
   Նոր ենթակայանի 10 կՎ էլ.սնումը հնարավոր է իրականացնել ԲԵ0144-ի 10 կՎ ԲԱ ից:
2. Էլեկտրամատակարարման իրականացման համար, անհրաժեշտ է դիմել «ՀԷՑ» ՓԲԸ ցանկացած սպասարկման կենտրոն (մասնավորապես՝ ք. Երևան, Արմենակյան 127)՝ ներկայացնելով ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջներով նախատեսված փաստաթղթերը՝ էլ. ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:

Տեխնիկական տնօրեն **Դ. Գրիգորյան**

կատարող Դ. Սահակյան
Հեռ. 59 12 65